ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՏՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, գ.Արծնի
Հեռ. 093-01-82-88
Էլ.Փոստ՝ artsni.lori@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԳԱՐՈՒ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Արծնի համայնքի ավագանու թիվ N31-Ա և N32-Ն որոշումները:

Աղիր՝ 2 թերթ

Համայնքի ղեկավար՝ _____ Խ.Խալյանեսյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

գ.Արծնի
23.12.2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, գ. Արծնի
հեռ. 093-01-82-88

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> դեկտեմբերի 2016 թվականի N 31-Ա

## ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Արծնի համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Արծնի համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Քոթոյան Մարիաննա՝ աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ,
2. Եգնատոսյան Խաչիկ՝ առաջատար մասնագետ, խորհրդի քարտուղար
3. Տոնոկանյան Սերգեյ՝ ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
4. Քոթոյան Իրինա՝ ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Ոսկանյան Դավիթ՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Օսիպով Ստեփան՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Հովհաննիսյան Սիլեր՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Խաչանեսյան Լիանա՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Մուսաելյան Մանվել՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
10. Օսիպովա Սոնա՝ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 19-ի Արծնի համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին N17-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1 Մկրտումյան Գանյա | | | |
| 2 Տոնոկանյան Սերգեյ | | | |
| 3 Քոթոյան Վերջարոյ | | | |
| 4 Քոթոյան Իրինա | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.Խաչանեսյան

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք,հասցե գ.Արծնի
Հեռախոս 093 01-82-88
Էլ.Փոստ՝ artsni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> դեկտեմբերի 2016թ. №32-Ն

### ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով՝

Արծնի համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Արծնի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

| Անուն, ազգանուն | | Կողմ( ) | Դեմ( ) | Չեռնպահ( ) |
|---|---|---|---|---|
| Մկրտումյան Վանյա | | | | |
| Տոնոյանյան Սերգեյ | | | | |
| Փնջոյան Վարդան | | | | |
| Քոթոյան Իրինա | | | | |

Համայնքի ղեկավար՝ _____ Լ. Խաչատրյան
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ

# ԾՐԱԳԻՐ (ՀԶՔԾ)

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Խենգո Խաչանեսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016թ թիվ 32 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

# Բովանդակություն


1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... 4
   2.1. Համայնքիընդհանուրնկարագրություն ..... 4
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... **Error! Bookmark not defined.**
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... 8
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 9
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... 10
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ..... 12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ..... 13
   3.1. Համայնքիզարգացմանտեսլական ..... 13
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... **Error! Bookmark not defined.**
4. ՀԶԾ ֆինանսավորում ..... 17
5. ՀԶԾ մոնիթորինգ ..... 20

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Արծնի համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Արծնի համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով , այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ ,որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները , համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀԶՔԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ ՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները:

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վելուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական խնդիրներն են՝ համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում,տեղի է ունենում արտագաղթ, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի մեծ մասը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների կամ հաստատվում են այնտեղ:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

ՀՀ Լոռու մարզի Արծնի գյուղական համայնքի 2017-21թթ. զարգացման քառամյա ծրագիրը (ՀԶՔԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

## 2 Համայնքի իրավիճակի նկարագրություն

### Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արծնի համայնքը վերաբնակեցվել է 1988թ .դեկտեմբեր ամսից,Ադրբեջանի Հանրապետության տարբեր շրջաններից բռնի գաղթած փախստականներով և Վրաստանի Հանրապետության տարբեր շրջաններից եկած մարդկանցով:

Գյուղը նախկինում եղել է ադրբեջանաբնակ,դրա վառ ապացույցն այն է ,որ գյուղը չունի ոչ մի եկեղեցական շինություն:

Գյուղը ծայրամասային է,լեռնային,չորս կողմից շրջապատված է լեռներով,գտնվում է ծովի մակերևույթից 1630-1700 մ բարձրության վրա:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 561.4 հա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 200 կմ, մարզկենտրոնից՝ 65 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 15 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ապավեն , Նորաշեն ու Սարչապետ գյուղական համայնքներին:

2005 թ կառավարության որոշմամբ `համարվել է սահմանամերձ:

Արծնի համայնքի օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը՝ լեռնային: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտէ, կայուն և երկարատև ձյանծածկույթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճէ, զով

ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխականէ: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները : Գյուղացիներն զբաղվում էին անասնաբուծությամբ, հողագործությամբ:

Համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց,որը սպասարկում է Ապավեն և Արծնի համայնքների սովորողներին: Դպրոցում սովորում է 59 աշակերտ : Համայնքից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազում է: Դպրոցում աշխատում է 18 աշխատող, որոնցից 11-ը մանկավարժ են:

2010թվականին .Հայաստանի Համահայկական Հիմնադրամի կողմից դպրոցի շենքը հիմնականում վերանորոգվել է և ներկայում գտնվում է լավ վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է էլեկտրոնական ջեռուցիչներով, ապահովված է ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով:

Համայնքի միջնակարգ դպրոցում գործում է ֆուտբոլի դաշտը, որից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև համայնքի երիտասարդները

Համայնքում գործում է բուժկետ՝ Տաշիր քաղաքի առողջության կենտրոնի մասնաճյուղը, որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետը տեղակայված է համայնքապետարանի շենքում, բարվոք վիճակում է, ապահովված է առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով:

Մշակույթի տուն չունենալու պատճառով,երիտասարդությունը չի կարողանում իր ուրույն կապը պահել և զբաղվել մշակույթով: Մշակույթի տան բացակայությունն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

Համայնքի գրադարանը2002 թվականին տեղափոխվել է համայնքի միջնակարգ դպրոց՝ 1130 կտոր գրքային ֆոնդով: Այդ գրադարանի պայմանները նույնպես բավարար են:

Համայնքում չկան բնակչության հոգևոր կարիքները հոգալու համար նախատեսված վայրեր՝ եկեղեցի.մատուռ:

Համայնքի բնակիչները ապահովված են խմելու ջրով:

2012 թվականին Սարչապետ գյուղից մինչև Արծնի գյուղ անցկացվել է գազատար: Համայնքի բնակչությունը առայժմ կապույտ վառելիքից է օգտվում: Համայնքի ամբողջական գազաֆիկացումը մեծապես նպաստել է բնակչության կենցաղային խնդիրների լուծմանը, ինչպես նաև փրկում է համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից:

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 10.5 կմ, որից մայրուղուց մինչև գյուղի վարչական սահմաններ 3 կմ-ոց ճանապարհը վերանորոգվել է 2015 թվականին համայնքապետարանի կողմից՝ կատարելով հիմնականում

հողային և խճապատման աշխատանքներ, սակայն այդ ճանապարհը ասֆալտապատ չէ: Մնացած 7.5 կմ-ոց մասը կազմում են ներհամայնքային փողոցները, որոնք կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման: Ներհամայնքային ճանապարհները և փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ, արտաքին (գիշերային) լուսավորության համակարգ:

Համայնքից մինչև մոտակա շուկա (քաղաք Տաշիր) ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 15 կմ, որից 3 կմ մինչև մոտակա Նորաշեն համայնք խճապատ է, կարիք ունի ասֆալտապատման: Ներկայում համայնքի բնակչությունը հիմնականում օգտվում է Վանաձոր և Տաշիր քաղաքների շուկաներից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին:

Համայքի տարածքում կա նաև 3 փոքր կամրջակ, որոնք գտնվում են համայնքով անցնող գետակի վրա:

## 2.2 Համայնքում սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի բնակչության թիվը կազմում է 298 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 139 և կանայք՝ 159: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- երեխաներ ՝ 0-6 տարեկան ---------- 39 մարդ
- դպրոցականներ ՝7-17 տարեկան –---------- 63 մարդ
- 18-62 տարեկան – ----------178մարդ
- 63 և բարձր ---------- 19 մարդ
- Թոշակառուներ---------- 27մարդ
- հաշմանդամներ - ----------12 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ –------1 մարդ
- աշխատունակներ –----------158մարդ
- զբաղվածներ –----------70 մարդ
- գործազուրկներ –----------135 մարդ,
- տնային տնտեսությունների թիվը ---------- 80
- նպաստառու ընտանիքների թիվը – ----------18

Համայնքում կան 158 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 50%-ը, մնացածը աշխատանք չունեն, սակայն վերջիններից միայն 2-ն են գրանցված Տաշիրի տարածաշրջանային զբաղվածության կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող համարվել գործազուրկ:

Համայնքի մոտ 80 ընտանիքներից 20-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում: Համայնքում բնակվում են նաև 12 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 1 երեխա:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվում են խոտհարքների :

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 357, այդ թվում կով՝ 191, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ ոչխար՝ 86: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, : Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

| Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը | Ցանքատարածության չափը | Արտադրանքի քանակը |
|---|---|---|
| կարտոֆիլ | 9հա | 10տ |
| կաղամբ | 0.20հա | 10տ |
| բանջարեղեն | 1հա | 4տ |
| միս | | 5տ |
| կաթ | | 325 |
| բուրդ | | 0.2տ |
| ձու | | **167 000հատ** |

| Անասունների տեսակը | Գլխաքանակը |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 357 |
| Այդ թվում կովեր | 191 |
| Մանր եղջերավոր անասուններ | 86 |
| Այդ թվում մայրեր | 59 |
| խոզեր | 53 |
| Այդ թվում մայրեր | 6 |
| թռչուններ | 668 |
| Այդ թվում հավեր | 558 |
| ավանակ | 3 |

Վերջին 2-3 տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ–երի կողմից կազմակերպված հասարակական հանրօգուտ աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքի ավագանու կողմից առայժմ չի ընդունվել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, համայնքը չունի տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներ (թերթ, համացանցային կայք, տեղական հեռուստատեսություն և այլն), սակայն համայնքապետարանում գործող հայտարարության տախտակի վրա փակցվում է ցանկացած տեղեկատվություն,որպեսզի հասանելի լինի յուրաքանչյուր անձին:

## *2.3Համայնքում իրական*ացվող ծրագրերը

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-21թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- **Համայնքում մանկապարտեզի և մշակույթի շենքի կառուցում**
- **Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում**
- **Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում**

2017-21թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում[1] նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ընդհանուր աղբավայրի կառուցում և շահագործում,

- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում,
- Տաշիր քաղաքի և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի ապահովում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրության և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

| N | Եկամուտի տեսակը | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ | 7600.0 | 8600.0 | | | |
| Ա | Հարկային եկամուտներ | | | | | |
| 1 | Հողի հարկ | 1317.2 | 1317.2 | 1317.2 | 1317.2 | 1317.2 |
| 2 | Գույքահարկ | 452.7 | 480.0 | 485.0 | 485.0 | 500.0 |
| 3 | Եկամտահարկ | | | | | |
| 4 | Այլ հարկային եկամուտներ | | | | | |
| Բ | Տուրքեր | 30.0 | 35.0 | 40.0 | 40.0 | 40.0 |
| 1 | Պետական տուրքեր | | | | | |
| 2 | Տեղական տուրքեր | 30.0 | 35.0 | 40.0 | 40.0 | 40.0 |
| Գ | Ոչ հարկային եկամուտներ | 331.0 | 331.0 | 335.0 | 335.0 | 335.0 |
| 1 | Վարձավճարներ | 331.3 | 331.3 | 335.0 | 335.0 | 335.0 |
| 3 | Տեղական վճարներ | | | | | |
| 4 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| Դ | Դոտացիա | 3500.0 | 3800.0 | 3800.0 | 4000.0 | 4000.0 |
| Ե | Եկամուտներ կապիտալ գործառություններից | | | | | |
| Զ | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | | |

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (4 միավոր) միայն աշխատավարձի տարեկան գումարը կազմում է 4398.1 հազ. դրամ = 366.5 հազ. դրամ x 12 ամիս:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարն այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա կապիտալ ծախսեր կատարելու համար:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Արծնի համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- ֆինանսի բացակայությունը

Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են՝

- ծնողական ներդրումների դժվարությունները
- ֆինանասական աղբյուրի բացակայությունը:

Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- մշակութային կյանքի պասիվությունը,
- մշակույթի շենքի բացակայությունը

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

-գործազրկությունը,

ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

- մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների

ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- միջոցների սղությունը,
- փողոցային լուսավորության բացակայությունը:

Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- ֆինանսական դաշտը,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը,
- հանրային տրանսպորտ չունենալը,
- կանգառների բացակայությունը,
- ճանապարհային նշանների բացակայությունը

Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- ոռոգման ցանցի բացակայությունը,
- սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
- գլխավոր մայրուղուց հեռու լինելը:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- հեղեղատարների բացակայությունը,
- աղբահեռացում չկազմակերպելը,

Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- գործարար միջավայրի բացակայությունը,
- ձեռնարկությունների բացակայությունը,
- երիտասարդների միգրացիան,

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի մեծ մասը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստ հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

## 2.6Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

| *Համայնքի ուժեղ կողմեր* | *Համայնքի թույլ կողմեր* |
|---|---|
| • Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը<br>• Համայնքում միջնակարգ դպրոցի գործելը<br>• Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը<br>• Տեխնիկական ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և համեմատաբար լավ վիճակը<br>• Համայնքը գազաֆիկացված է<br>• Համայնքապետարանի շենքը հիմնովին վերակառուցված է | • Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը<br>• Համայնքում մանկապարտեզի բացակայությունը<br>• Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը<br>• Մշակույթի տան բացակայությունը<br>• Համայնքի համայնքապետարանի, , և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում<br>• Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը<br>• Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը |

| | |
|---|---|
| | • Խոտհարքների չափաբաժնի պակաս լինելը և վարելահողերի չմշակելը<br>• Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի և Տաշիր քաղաքի հետ<br>• Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը<br>• Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը<br>• Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը<br>• Համայնքի 1 գերեզմանատանի չցանկապատված լինելը<br>• Համայնքում  եկեղեցու բացակայությունը, բնակչության հոգևոր կարիքների բավարարմանը չնպաստելը |
| *Հնարավորություններ* | *Սպառնալիքներ* |
| .Խմելու ջրի պաշարի առկայություն<br>.Բերրի հողերի առկայություն | .Գյուղ. մթերքների գների նվազում<br>.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն<br>.Սպառման շուկաների դժվար հասանելիություն<br>.Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն<br>.Խիստ կլիմա /ցրտահարություն/<br>.Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ |

## 3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

**3.1Համայնքի զարգացման տեսլականն է՝**

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և հարմարավետ ապրելակերպ վարել:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- Համայնքում կաթի , մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

3.2Համայնքի զարգացման 2017-21թթ. քառամյա ծրագրի**անմիջական նպատակներն են՝**

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով,

- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության,) զարգացում ՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքում նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ստեղծում և բարելավում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (համայնքապետարան, դպրոց, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով,
- Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:
- Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը:
- Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը ,ցանկապատումը կազմակերպել,
- Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:

# Ծրագիր 1

**Տնտեսական հարաբերություններ. քաղաքաշինություն**
(Ոլորտի անվանումը)
**Համայնքում մանկապարտեզի և մշակույթի շենքի կառուցում**
(Ծրագրի անվանումը)
**Արծնիի համայնքապետարան**
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 30 000 000 (եռեսուն միլիոն) դրամ

**Ծրագրի հիմնավորումը**
Քանի որ համայնքը չունի մանկախպարտեզ(նախակրթարան) բայց համայնքում կա 39 նախադպրոցական երեխա,որոնք ունեն դրա կարիքը: Համայնքում չկա նաև մշակույթի տուն, որի պատճառով բնակչության մշակութային կյանքը, կարելի է ասել, սառեցված վիճակում է: Համայնքում անհրաժեշտ է ստեղծել մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ, կազմակերպել և անցկացնել հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ:

**Ծրագրի նպատակները**
Մանկապարտեզի և մշակույթի տան կառուցումը կապահովի մի քանի աշխատատեղ,երեխաները կազատվեն փողոցի ցեխ ու փոշուց և դաստիարակություն կստանան մանկապարտեզում:
**Ծրագրի խնդիրները**
1. Ձեռք բերել ՀՀ Լոռու մարզպետարանի միջնորդությունը և ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ծրագիրը ներառելու ՀՀ 2017թ. պետական բյուջեի նախագծում:
2. Համայնքի կողմից պատվիրել և ստանալ համայնքային նոր մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
3. Համայնքի ավագանու կողմից կայացնել որոշում հողհատկացման մասին՝ համայնքային մանկապարտեզ կառուցելու համար:
4. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կազմակերպել մրցույթ՝ մանկապարտեզի կառուցման շինարարական կազմակերպությունն ընտրելու համար:
5. Վերահսկել մանկապարտեզի կառուցումը և հանձնումը համայնքի հաշվեկշռին:

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**
- համայնքում կստեղծվեն և կգործեն մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ՝ երեխաների, երիտասարդների և մեծահասակների ներգրավմամբ,
- համայնքային կենտրոնում կկազմակերպվեն և կանցկացվեն հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ,
- կբարձրանա համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը,
- կաշխուժանա համայնքի հասարակական և մշակութային կյանքը:

# Ծրագիր 2

**Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**
(Ոլորտի անվանումը)
**Միջհամայնքային և ներհամայնքային Ճանապարհների և փողոցների խճապատում և բարեկարգում**
(Ծրագրի անվանումը)
**Արծնիի համայնքապետարան**
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 35 000 000 ( եռեսունհինգ միլիոն) դրամ

**Ծրագրի հիմնավորումը**

Միջհամայնքային և ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 10.5 կմ, որից մայրուղուց մինչև գյուղ տանող ճանապարհի 3 կմ-ոց հատվածը վերանորոգվել է 2012 թվականին համայնքապետարանի կողմից՝ կատարելով հիմնականում հողային և խճապատման աշխատանքներ: Մնացած 7.5 կմ-ոց մասը կազմում են ներհամայնքային փողոցները, որոնք նույնպես կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքում շահագործվում են 25 մարդատար և 4 բեռնատար մասնավոր ավտոմեքենաներ, որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար:

**Ծրագրի նպատակները**

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

**Ծրագրի խնդիրները**

1. Ներհամայնքային կենտրոնական փողոցների 7.5կմ-ոց հատվածի հողային, խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017-21թթ. ընթացքում:
2. Համայնքի 2017-21թթ. բյուջեներում նախատեսել 500.0 - հազարական դրամ գումար՝ վերանորոգելու տարեկան 7.5. կմ երկարությամբ ներհամայնքային կենտրոնական փողոցները:
3. Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և վարձակալել մասնավոր բեռնատար ավտոմեքենաներ՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:
4. Մինչև 2017-21թթ. յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- 2017-21թթ. ընթացքում համայնքում կվերանորոգվեն և կբարեկարգվեն ներհամայնքային կենտրոնական փողոցների 7.5 կմ երկարությամբ հատվածներ,

- այդ փողոցներում կվերանան ջրափոսերը, դրանք կդառնան անցանելի ու հարմարավետ ինչպես տրանսպորտային միջոցների, այնպես էլ հետիոտների երթևեկության համար՝ տ արվա բոլոր եղանակներին:

# Ծրագիր 3

**Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**

(Ոլորտի անվանումը)

**Ներհամայնքային Ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում**

(Ծրագրի անվանումը)

**Արծնիի համայնքապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 3 000 000 (երեք միլիոն )դրամ

**Ծրագրի հիմնավորումը**

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հագեցած չեն արտաքին լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2017-2021թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցների վերանորոգումից և բարեկարգումից հետո անհրաժեշտ է դրանք վերազինել արտաքին լուսավորության համակարգով:

**Ծրագրի նպատակները**

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

**Ծրագրի խնդիրները**

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 43% և 57% համամասնությամբ):
2. Մինչև 2018թ . մայիսի 1-ը պատվիրել և պատրաստել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցում միակողմանի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով 75 մետաղյա հենասյուներ՝ 4.5 մ բարձրությամբ, 70 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասյան վրա՝ 1 լուսային սարքավորում, և էլեկտրահաղորդալարեր՝ 10 մմ հաստությամբ, 3 կմ երկարությամբ:
3. Համագործակցել և կնքել պայմանագիր Հայաստանի էլեկտրացանցերի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական (տեխնիկական) խումբ:
4. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասյուները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:
5. Իրականացնել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2018թ. հոկտեմբերի 1-ն այն հանձնել շահագործման:

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- 2018թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցում կանցկացվի արտաքին լուսավորության համակարգ՝ 3 կմ երկարությամբ,
- այդ փողոցը կդառնա լուսավոր, անվտանգ ու գեղեցիկ՝ ինչպես համայնքի բնակիչների ու տրանսպորտային միջոցների, այնպես էլ համայնքում հյուրընկալվող զբոսաշրջիկների համար,
- ձեռք կբերվի համապատասխան փորձ, որի հիման վրա հետագա տարիներին կնախատեսվեն և կիրականացվեն ներհամայնքային մնացած փողոցների արտաքին լուսավորության համակարգերի անցկացման աշխատանքները:

# 4 ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

Համայնքի սեփական եկամուտներից,

Ներքին պաշտոնական դրամաշնորհներից

Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,

Բարեգործություն/նվիրատվություններից

Այլ աղբյուրներից,

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀԶՔԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք չորս տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶՔԾ-ում 2019-21թթ. համար նախատեսված ոլորտային ծրագրերը, համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման, ընդունման և իրականացման համար: Գործնականում, ՀԶՔԾ-ի իրականացումը կհանգի հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք չորս տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար, համայնքի 2019-21թթ. ՀԶՔԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա չորս տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական)

փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶՔԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Լոռու մարզպետարանի), ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Լոռու մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատ գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՔԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

ՀԶՔԾ-ում կամ տվյալ տարվա բյուջեում ներառված ծրագրերը կամ ծառայությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, նախատեսվում է, որ յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության համար կսահմանվեն և կգնահատվեն դրանով նախատեսված աշխատանքների կատարման որոշակի ցուցանիշներ, որոնց միջոցով էլ մոնիթորինգի կենթարկվի և կգնահատվի տարեկան առաջընթացը ՀԶՔԾ-ով սահմանված՝ համայնքի միջնաժամկետ նպատակներին հասնելու գործում:

# 5 ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

## «Արծնի համայնքում մանկապարտեզի և մշակույթի շենքի կառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Մշակույթի և նախադպրոցական կրթության բարելավվում ,աշխատատեղերի ստեղծում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Համայնքում կրթության բարելավվում ,արտագաղթի խթանում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>Ա.Ճ %</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>20</td><td>20</td><td>20</td><td>20</td><td>20</td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1 Արծնի համայնքում մանկապարտեզի և մշակույթի շենքի կառուցում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>Ա.Ճ %</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>10</td><td>20</td><td>30</td><td>40</td><td>50</td></tr>
<tr><td colspan="6">2 Արծնի համայնքում մանկապարտեզի և մշակույթի շենքի կառուցում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>10</td><td>20</td><td>30</td><td>40</td><td>50</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթի հաստատում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. մանկապարտեզի և մշակույթի շենքի կահավորումը</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝5 000 000<br>Կապիտալ ծախսեր՝30 000 000<br>Ընդհանուր բյուջեն՝35 000 000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Արծնի համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">Սկիզբ 2017թ ավարտ 2021թ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Մանկապարտեզի և մշակույթի տան կառուցումը կապահովի մի քանի աշխատատեղ,երեխաները կազատվեն փողոցի ցեխ ու փոշուց և դաստիարակություն կստանան մանկապարտեզում:<br><br>համայնքում կստեղծվեն և կգործեն մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ՝ երեխաների, երիտասարդների և մեծահասակների</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | ներգրավմամբ, |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

### « Միջհամայնքային և ներհամայնքային Ճանապարհների և փողոցների խճապատում և բարեկարգում »

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում: | | | | | | |
| | Ցուցանիշներ աճ(%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| Ծրագրիմիջանկյալ արդյունքներ | 1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 2 | 3 | 4 | 1.5 | 0 |
| | 2. Բարելավված հասարակական տրանսպորտ | | | | | | |
| | Ցուցանիշներ երթուղի | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 2 | ..3 | 4 | 1.5 | 0 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:<br>1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:<br>1.3.Հեղեղատարներ կառուցել:<br>1.4. Կատարել ճանապարհների կահավորում:<br>1.5. 2 կանգառի կառուցում:<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի ապահովվեն գոնե 1 հասարակական տրանսպորտի երթուղային տաքսիով; | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր 5մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 30մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 350մլն դրամ | | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները |
| Ծրագրի հիմնական շահառուները | Արծնի համայնքի բոլոր բնակիչները և հարևան 3 համայնքների բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ. |
| Ծրագրիհամառոտ նկարագրություն | Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին: |

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

**«Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում »**

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Սահմանամերձ Արծնի համայնքի փողոցների լուսավորության ապահովվում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի բնակիչներին բարեկարգ լուսավոր փողոցներով ապահովում: | | | | | | |
| | Ցուցանիշներ աճ(%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| Ծրագրիմիջանկյալ արդյունքներ | 1. Բարեկարգված միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 1 | 3 | 3.5 | 0 | 0 |
| | 2. Բարելավված և լուսավորված փողոցներ | | | | | | |
| | Ցուցանիշներ երթուղի | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 1 | 3 | 3.5 | 0 | 0 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Էլեկտրահաղորդալարերի և էլեկտրոջահերի ձեռքբերում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Փողոցների լուսավորում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝0.3մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2.7 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ | , դրամական միջոցներ և 2 աշխատակից | | | | | | |

| | |
|---|---|
| ռեսուրսներ | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները |
| Ծրագրի հիմնական շահառուները | Արծնի համայնքի բոլոր բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ. |
| Ծրագրիհամառոտ նկարագրություն | Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար: |